

կան նաև աւելի բազմաթիւ դասեր գողերու ու քսակահասաներու . որոնց թիւը 200,000<sup>2</sup> կ'անցնի . չորս հազարի չափ ալ գողակից կայ որոնք գողցած բաները կը պահեն ու կը ծախեն և ստակը մէջերնին կը բաժնեն : 15,000<sup>3</sup> չափ ալ ծառայք կան որոնք տեղ ու տէր չունին : Ըստ միայն օրուան հացերնուն կարօտ մարդիկներն են , որոնցմէ դուրս հազարաւորներ ալ կան որ հազիւ ճակատներնուն քրտինքովը ապրելու չափ կը վաստակին : Ընտանիքն ալ այս ծովացեալ քաղքին վիճակը , ուր որ մէկ երջանկութե հարիւր թշուառութի կը փոխանակէ :

Ինտրա խել մը համբաւաւոր մատենագրաց հայրենիքը եղած է . որոնց մէջ գլխաւորներն են Սիւթըն , Փրանկիսկոս Պէքըն , Սուլմաս Սուր , Նաւլի , Փոփ , Նէմաըն , ու Սիւմբըլ :

Ինտրա անունը երկու ստուգաբանութիւն ունի . մէյմը կեղտաց բառէն առաջ եկած կը սեպուի , այսինքն իւնտէն որ է ըսել քաղաք անասի , կամ բրետոնաց բառով ինտին որ կը նշանակէ լճի քաղաք : Սիւմիզի ձախ կողմը եղած քաղքին մասը Սիտլէսի կոմսութեան կը վերաբերի . իսկ աջ կողմինը Սըրրի կոմսութեանը :

Տ . Տ . Թ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Իրեք ամիս ձեան տակ քնակորիսն :

ՊԱՊԸ և իր թուրը կը ջանային ձանձրալի ժամանակը օգտակար աշխատութեամբ մը անցընելու . ուստի կրակարանին աղօտ լուսովը թուաբանութեան սկզբունքները կը սորվեցընէր տղուն , սուրբ գրոց մէջ պատմուած դէպքերը և իր ժամանակը հանդիպած թէ տեսած և թէ ուրիշներէն լսածները կը պատմէր իրեն :

1 Առջի հատուածը տես էջ 184

Պետեմբերի առջի օրը այսպէս կը գրէ Սիւմբըն . .

« Ընդոյս այս օրը նշանելու ժամանակս սարսափ մը կը զգամ : Սիւմբըն որ անցեալ Պետեմբերի վեց օրը միայն ինծի այնչափ երկայն եկաւ , տէր Ըստուած ինչ պիտի ըլլայ ուրեմն այս ամբողջ ամիսը որ այսօր կը սկսի : Սիւմբըն որ ասով մեր թշուառութեանցը վերջ մը ըլլար , ինչ և իցէ , սիրով կը համբերէինք , բայց ով գիտէ թէ երբ կը լրմննայ . այնչափ սաստիկ ձեան տակ թաղուած մնացեր ենք , որ թերևս ամբողջ ամառն ալ չհալի : Պապս կը մխիթարէ զիս ըսելով թէ մեզմէ շատ աւելի թշուառ բանտարկեալներ կան . վասն զի մենք կրակ ունինք որ անոնք չունին . մենք աղօտ լոյս մը կը տեսնենք , իսկ անոնք ան ալ չունին . մեր բանտին մէջ կրնանք ասդին անդին երթալ գալ , իսկ անոնք երբեմն ալ երկաթի կը զարնուին , և : — Բայց ինծի խիստ թեթեւ մխիթարութիւն մըն էր այս բազդատութիւնը :

Պապս նորէն սկսաւ առաջ տանիլ խօսքը . « Իրդեակ իմ , ըսաւ , մինակ չենք հոս տեղս , իրաւ մեծ ցաւ է ինծի ըզքեզ ալ այս խեղճութեան մէջ տեսնելուս համար , բայց դարձեալ մեծ ալ մխիթարութի է , մանաւանդ թէ հարկաւոր ալ է , և թերևս դուն ալ գոհ ես իմ հետս ըլլալուդ : Պիանքողինան ալ կարծես թէ կերպով մը կ'աշխատի քաղցրացընել մեզի մեր դժբաղդութիւնը իր ներկայութեթ . և իրաւցընէ միայն կաթին համար չէ որ ես կը սիրեմ զինքը » :

Նետագայ օրը , այնպիսի աշխատութեան մը ձեռք զարկի , որ զիս շատ յոգնեցուց , վասն զի ուզեցի մեր բանտին դրան դիմացը կտոր մը տեղ ձիւնը մէկ դի ընել , որպէս զի կարենանք քիչ մը արևուն լոյսը վայելել : Երբ օրուան աշխատութիւնս աչքիս բան մը չէր երևնար՝ երբոր վերջասկէս կրցայ ծերը հիւղէն դուրս հանել և մէյմընալ երկնից գեղեցկութիւնը իրեն ցուցընել : Պերեզմանական տխուր լուծեթ մը բոլոր բնութիւնը մեռած կ'երևար . կեն

դանի մը ամենեւին չկար . միայն անպղ մը խիստ հեռուէն կը թռչէր :

Հիւզին դուռը բանալէս ետքը , փոր- ձեցի նաև պատուհանն ալ բանալ , որ եթէ յաջողցնելու ըլլայի , մեզի համար մեծ մխիթարութի պիտի ըլլար : Բայց չափէն աւելի աշխատելով , և պատուս ըսած զգուշութիւնները չպահելով , իբ- րև աւելորդ և միանգամայն ձեռք զար- կած գործքիս խափանարար , ձեան տակ թաղուելու վտանգի մէջ ինկայ , ուսկից նեղութեամբ հազիւ կրցայ աղատիլ . բայց մեծ արգելք մը ելաւ դիմացս որ բոլոր իմ աշխատութիւններս և միտքս դրածները փձացուց : Իտեկտեմբերի 9<sup>ին</sup> այնպիսի զարհուրելի միրիկ մը ելաւ , որ կը սպառնար հիւզերնիս քանդելու . ամբողջ քսանըչորս ժամ տևեց : Բայտիտուր դէպքիս մէջ ծերուն խաղաղու- թիւնը ամենեւին չայլայլեցաւ . այն նե- ղութեան ժամերը աղօթքով անցու- ցինք , և այն աղօթքը կամայ կամաց զիս զօրացուց :

Հազիւ թէ միրիկը դադրեցաւ , մեր բանտին դուռը սաստիկ բռնութեամբ և շառաչմամբ մը ցնցուեցաւ , երկուք- նիս ալ մէկէն դուռը վազեցինք , և պատ- ճառը քննեցինք որ իմ դիզած ձեան կտորներն էին , որոնք դուռը բանալու համար երկու կողմը դիզեր էի : Բայն կտորներուն ինչալովը պատուհանը գո- ցուեցաւ , և մենք դարձեալ սև խաւա- րին մէջը մնացինք :

Իտեկտեմբերի 10<sup>ին</sup> կը գրէր Լուի- ճին . “ Երեկուան օրը մեծ վախ մը ունեցանք . այսօր ալ այնչափ անհան- զիստ է սիրտս , որ հազիւ թէ կրնամ այսօրուան հանդիպածները պատմել . ո՛հ , դեռ ամէն փորձանքներէն ազատ չեմք : Ես այժը կ'ըլլելու հետ էի , պատս ալ քիչ մը կրակ կը վառէր . վասն զի թէպէտ ձեան տակ թաղուած էինք , բայց դժնդակ ցուրտ կը զգայինք . յան- կարծակի Պիանքոլինան ականջ դնել սկսաւ , իբրև թէ արտաքոյ կարգի ա- ղաղակ մը կը լսէր , և ուշադրութեամբ զասդիս անդին կը նայէր և բովանդակ վախի դողի մէջ էր : Երբ դարձայ պա-

պուս հարցնելու այն յանկարծակիան այլայլութեանը պատճառը , ունալու ձայներ սկսայ լսել . և զարհուրած սկսայ կանչել թէ Լուի՞ճ գայլ են :

“ Լուի՞ճ , որդեակ իմ , և փայփայէ Պիանքոլինան ” : Պապս մօտեցաւ անոր և քիչ մը աղ տուաւ . բայց այժը կը դողար դարձեալ . ունալներն ալ չէին դադրեր :

“ Լուի՞ճի , ըսաւ պապս , ինչ պիտի դար գլուխնիս թէ որ ինչուան պատու- հան կրցած ըլլայիր ճամբայ բանալ : Բայն կատաղիները , զարնելով զարնե- լով , կը ջարդէին զանի . և հիմա մենք ի- րենց որս պիտի ըլլայինք ” :

— “ Բայց գոնէ հիմա ազատ ենք ” :

— “ Ինձի ալ անանկ կ'երևայ , անոր համար կամաց խօսինք , անշուշտ այժուն մայելը լսեր են ” :

Երբ ձեռքս այժն ալ կ'իմանար լուծե հարկաւորութիւնը , վասն զի ամենեւին բերանը չբացաւ : Ես անկող գրեթէ բու- լոր օրը անցուցինք , բայց մէկ միջոց մը գայլերուն ունալը և ըրած աղաղակ- նին այն աստիճան սաստկացաւ , որ կը կարծէի թէ ալ վերջի ժամերնիս հասեր է :

“ Չիւնը կը բրեն կ'ըսէի պապուս . ու վախուս իրեն կը պլլուէի , ո՛հ , հիմա զմեզ պատառ պատառ պիտի ընեն ” :

“ Եւմուզեր ճշմարտութիւնը ծածկել քեզմէ , Լուի՞ճի , մեծ վտանգի մէջ ենք , բայց որոշ բան չեմ կրնար ըսել , Չիւնը որովհետև պինդ է կրնան գայլերը լե- րան վրայ քալել , բայց գազաթը շատ չեն կենար : Իտերևս կենդանույ դիակ մը մինչև հոս քաշկոտեր բերեր են , և փարատելու ժամանակ մէկ մէկու հետ կը կռուին : Եւ թէպէտ զգան ալ թէ մենք հոս ենք , բայց չեմ կարծեր թէ այնչափ կարողութիւն ունենան որ կա- րենան տանիքը փլցնել . աստուա- ծային նախախնամութիւնը թող տուաւ որ պատուհանը և դուռը նորէն ձեան տակ թաղուին ու ցրտէն սնդանան . մեծ բաղդ ունեցանք՝ որ գայլերը քուկին դու- րը և պատուհանը բացած ժամանակը վրանիս չհասան : ”

— “ Երբեմն , ըսի ես դարձեալ , մեր

բանտարգելու թիւնը աւելի պիտի դառնանայ : Չմեռը հազիւ թէ սկսած է , ցուրտը թերեւս օր քան զօր աւելի սաստկանայ : Լ՛Տ , պապս , մենք պիտի չելլենք ասկէ , :

Գայլերը մինչև իրիկուն գլխնուս վերայ կեցան , վերջապէս ոռնալները դադրեցան : Գիշերը զարհուրելի երազներ տեսայ , անանկ որ երկրորդ առաւօտը աւելի տկարացած ելայ , իբրև թէ ամբողջ գիշերը արթուն կեցած ըլլայի :

Դեկտեմբերի 15<sup>ն</sup> էր , երբոր մենք մէկ մէկու հետ կը խօսէինք թէ ինչ կ'ընեն մեր ազգականները և բարեկամները , արդեօք կը մտածեն մեր վրայ : Լ՛Տ , այս կը մտածեն , ըսի . մանաւանդ թէ որ խեղճ հայրս անոնց հետ մէկտեղ է . բայց թէ մեզի օգնելու եկած ժամանակը կորսուած ըլլայ . ուրիշները թերեւս մոռցած ըլլան զմեզ և մեռած կարծեն : — “ Լ՛Տ , որդեակ իմ , Լ՛ստուած ըլլայ մեր յոյսը . գիտնալով որ միայն ինքը կրնայ փրկել զմեզ և այս տառապանաց տեղէն ազատել , ” :

21<sup>ն</sup> դիպուածով մէկ հարկաւոր բան մը գտանք . յիշեց պապս , որ քանի մը տարի առաջ , հիւղին մէկ անկիւնը տասը տասուերկու շիշ գինի թաղած էր , մէկէն հողը մէկդի ըրի և քիչ մը խորը գտայ զանոնք անապական մնացած : Խեղճ ծերուն մեծ օգնութիւն եղաւ , որովհետև այնպիսի խեղճ կեանքով մը յայտնի կը տեսնուէր օր օրուան վրայ տկարանալը :

Բայց ի վերայ այս ամենայնի ժամանակը խիստ դանդաղ կ'անցնէր : Պապս և ես ձանձրութեան յաղթելու համար , երբեմն բարոյական , շատ անգամ կրօնական բաներու վրայ կը խօսէինք , և աշխատութիւն մ'ալ կ'ընէինք՝ ձեռքերնէս եկածին չափ ջանալով որ լաւագոյն ընենք մեր վիճակը : Սորվեցանք նաև մշտնջենաւոր խաւարի մէջ աշխատիլ , որուն մէջը թաղուած էինք , թէպէտ իմ սիրտս , շատ անգամ հիւղէն դուրս հեռունները կը պտրտէր : Սակայն պապուս մէկ թեթև հիւանդութիւնը իմ այս անհանդարտութիւն ալ աւելի սաստ

կացուց . առաջինէն աւելի սկսայ վրան հոգ խնամք ընել . մանաւանդ որ վրաս վախ մ'ալ գալով որ չըլլայ թէ մեր ազատելէն առաջ զիս թողու երկինք երթալու , մեծապէս այլայլեցայ : Իւստի այս տխրալից մտածութենէն , և դարձեալ ոչ ինչ ընդհատ քան զայս , հօրս մահուան մտածութէն շփոթած , քրիստոնէական մխիթարութեամբ զիս կը մխիթարէի որ չյուսահատիմ : Բայց տարւոյն վերջերը դարձեալ պապս վրայ եկաւ , ես ալ քիչ մը քաջալերուեցայ :

Յունուարի 1<sup>ն</sup> այս հետեւեալ կտակը գրեց .

“ Արնայ ըլլալ որ իմ վերջին կամքս մերձաւորացս չյայտնած՝ բաժնուիմ իրենցմէ : Իմ ընչիցս վրայ մասնաւոր կարգաւորութիւն մը չունիմ ընելիք . բայց որովհետև անկարելի է որ մտքէս ելլեն իմ Լուիճի Լոիւաց թուանս վերաս ցրցուցած խնամքը և սէրը , անոր համար կ'աղաչեմ իմ ժառանգներուս՝ որ ըստ ժամանակին իմ կողմանէս իմ ժամահար ժամացոյցս , և իմ հրացանս և աստուածաշունչս որ իմ հօրմէս ինծի ընկած է՝ իրեն տան : Լ՛յս իմ յիշելիքներս իրեն հաճոյ ըլլալուն վրայ չեմ տարակուսիր :

Ազնիտէս հիւղին մէջ . Յունվ . 1

ԼՈՒԻՃԻ ԼՈՓՌԱՑ .

“ Պապուս այս կերպ կտակը , զիս դարձեալ տխրեցուց և նորոգեց իմ վախս , որ հազիւ հանդարտած էր : Եւ յիրաւի քանի մը օր վերջը , դարձեալ պապուս առողջութիւնը այլայլեցաւ , քան զառաջինը աւելի ծանր կերպով մը . և ուղեց առաջուցուրնէ իմացընել ինծի գրելուս գալիք փորձանքը . ուստի անկողնին քով կանչելով ըսաւ :

“ Յիշէ զհայրդ , և վստահ եղիր թէ նորէն զինքը պիտի տեսնես . ես հիմա բեռն միայն կրնամ ըլլալ քեզի , բայց պէտք է անձային կամաց հնազանդիս : Շուտով այս հիւղը մի թողուր . ու երբոր ես մեռնելու ըլլամ , հոգւոյս համար ազօթք ըրէ : Լ՛յս հիւղին հեռու

անկիւններէն մէկը բաւական խորու-  
թեամբ փոս մը փորէ , և վախճանելէս  
երկու օր վերջը հոն ամփոփէ զիս : Վառն  
սրտոտ ես , նայէ որ այն յիմար և աւե-  
լորդապաշտ վախը , որ մեռելոց վրայ  
կ'ունենան տկարամիտները , մտքէդ հա-  
նես . մտածէ որ Մտուած երկինքէն  
վրագ կը հսկէ , թէ որ ասոր վրայ ապա-  
հով ես , ինչ բանէ կը վախնաս :

Սաստիկ նեղութենէս խռոված տակ  
նուվրայ եղայ . քանի որ կը մտածէի ,  
որ պապս պիտի կորսնցընեմ , և թէ որ-  
չափ ատեն ալ արդեօք միս մինակ այն  
մութ բանտին մէջ պիտի մնամ՝ չէի  
կրնար հանդարտիլ : Բայց բարի ծերուն  
օրերը համբուած էին , իրեն երկար ըն-  
թացիցը վախճանը հասած էր . . .  
ես միայն մնացի . . .

Մըջեցելոյն վրայ իմ սգալից պարտ-  
քերս կատարելէն ետքը , և ամենայն  
կերպով յարմարցընելով զիս ինծի  
տուած խրատուցը , վճատութեան և  
լքման մէջ ինկայ . անյաղթելի տրտմու-  
թիւն մը կը զգայի ներսս , որ զիս տակն  
ուվրայ կ'ընէր , և չէի կրնար երեւ-  
կայական վախերուն յաղթել՝ որ կամաց  
կամաց առանց ուղեւորս առջևս կու  
գային : Սկիզբները անանկ եղայ որ ին-  
չուան զօրութիւն և սիրտ չմնաց վրաս  
զիս մէյմը առ աղբիւրն ամենայն միս-  
թարութեանց դարձընելու : Բայց վեր-  
ջապէս գթացաւ Մտուած իմ վիճակիս  
վրայ . ես ինծի եկայ , աղօթք ըրի , և  
զօրանալ զգացի :

Վանի մը օրուրնէ 'ի վեր իմացեր  
էի որ օդը աւելի կակղացեր է , և կրակի  
շատ հարկաւորութիւն չէի իմանար :  
Մյսօր ցորեկուրնէ երկու ժամ վերջը ,  
խուլ մոնչիւն մը լսեցի , նման՝ հեռու և  
խոր որոտման շառաչմանը . քանի որ  
մօտեցաւ սարսափելի դարձաւ , սաստիկ  
փոթորկով հանդերձ : Սխիւս սկսայ  
պոռալ , շատ կահ կարասիքը գետին  
գլորեցան . և սարսափելի փոշի մը հիւ-  
ղին խոհակերոցը բռնեց : կը տեսնէի  
հիւղին սաստիկ ցնցմունքը : Բայց 'ի  
վերայ այսր իմ հարկաւոր բաներս լաւ  
վիճակի մէջ էին : Մն ատեն մէյմը այ-

ցելութեան եղայ իմ միայնարանիս ա-  
մէն կողմը . երբ ախուր մտայ , հոն  
այս դէպքին վախնալու հետքերը տե-  
սայ : Վետինը բեկորներով ծածկուած  
էր , պատը տեղ տուած , և քիչ մ'ալ վար  
ծուած , բայց դեռ ոտքի վրայ էր , տա-  
նիքին լերան կողմի մէկ կտորը ջար-  
դուեր էր : Վառչակեցի որ ձեան մեծ  
հիւս մը , երկայն բարակ գլորելով ե-  
կած հիւղին կանակը կը թնած պիտի  
ըլլայ :

(ԳԻՏԻ ՇԵՐՈՒՆԵՅՈՒՄ)

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՍԿԶՐՈՒՆԻՔ ԲՆԱՆՈՒԾՈՒԹԵԱՆ

Գրաւ ժՁ . Բնադասական անուանակոչութեան  
վրայ :

Քառասնէ մարտիէն եր :

Գ . Մտնց մէջ առջիմներն կը սե-  
պուին երկու նոյնաթթու և տարարմատ  
աղերէ ձևացած մարմինները , որոնք  
կրնան ալ՝ կ'ըսուին . զոր օրինակ՝ Սը-  
ծմբուտ պաղլեղին և Սծմբուտ պոտա-  
սին միաւորելով կ'ըլլայ՝ կրնան ծծմբուտ  
պաղլեղի և պոտասի՝ ըսուած աղը . ո-  
րուն անուանակոչութիւնն ալ ինչպէս  
որ կ'երևայ շատ պարզ է : — Մտնց մէջ  
կը սեպուին անոնք՝ որ այլ և այլ արմատ  
ներու մի և նոյն թթուին հետ միաւո-  
րելէն կը բաղկանան ու երբեալ ալ կ'ը-  
սուին . զոր օրինակ երբեալ ծծմբուտ  
պաղլեղի , պոտասի և աւազի :

Ե . Բաւակ մարմնոց մէջ կը սեպուին  
անոնք՝ որ երկու տարասեռ երկակնե-  
րէ կը բաղկանան . ինչպէս երբ մե-  
տաղի հետ միաւորած մետաղատիպ  
մարմին մը , նոյն մետաղին թթուածնե-  
լոյն հետ նորէն միանայ . զոր օրինակ  
Սարրոյ ծծմբուտը՝ Սարրոյ թթուի .

1 Գղ . Sel double.  
2 Գղ . Sulfate double d' alumine et de potasse.  
3 Գղ . Sulfate triple d' alumine, de potasse et  
d' ammoniaque.